# Հայ ժողովուրդը թեեւ ծանր կացության մեջ, կանգնած է մեծ ապագայի շեմին

## *ասում են եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամները*

Հունիսի 13-ից Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով Հայաստանում էր գտնվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Եւրոպական եկեղեցիների համաժողովի պատվիրակությունը: Պատվիրակության անդամները հանդիպեցին Վեհափառ Հայրապետի, խորհրդարանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ պաշտոնական այլ անձանց հետ: Ինչպես հունիսի 19-ին Հայաստանի Գերագույն խորհրդում տեղի ունեցած այդ պատվիրակության մամլո ասուլիսում լրագրողներին տեղեկացրեց պատվիրակության ղեկավար հոգեւորական դոկտոր Ջորջ Ցեցիսը, այցի նպատակներն էին. երկրագնդի 400 միլիոն քրիստոնյաների խոր մտահոգությունն ու համերաշխությունը հայտնել հայ ժողովրդին Հայաստանում ու Ղարաբաղում ստեղծված ծանր կացության առթիվ, ուսումնասիրել իրավիճակը Ղարաբաղում եւ Ադրբեջանի հայաբնակ շրջաններում, ծանոթանալ Հայաստանում տիրող իրավիճակին, հատկապես այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել Հայաստանի խորհրդարանի կողմից Անկախության հռչակագիրն ընդունելուց ի վեր, առաջարկել հայ ժողովրդին եկեղեցիների օգնությունը, ելնելով ամբողջ ռեգիոնում արդարություն եւ խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից:

Պատվիրակության համար ստեղծվել էին բոլոր պայմանները Ադրբեջանից տեղահանվածների, Հայաստանի սահմանամերձ գյուղերի բնակչության, նաեւ պատանդների ազգականների հետ հանդիպելու համար: Գերաշնորհ Դուէյն Էփսը (ԱՄՆ) ասաց, որ պատվիրակության անդամները մեծ տպավորություն են ստացել խորհրդարանի եւ կառավարության անդամների պրոֆեսիոնալ մակարդակից, եւ շատ ուրախալի է, որ Հայաստանը պատկանում է սակավաթիվ այն այն երկրներին, որոնք ընդունել են մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային փաստաթղթերը, որոնք թույլ են տալիս միջազգային կազմակերպություններին վերահսկել մարդու իրավունքների պահպանումը այս կամ այն երկրում:

*«Մենք ցնցված ենք տեղահանվածների եւ սահմանամերձ գյուղերի բնակիչների հետ ունեցած մեր հանդիպումներից: Մարդիկ ամենասկզբից դիմել են ազերի իշխանություններին եւ խորհրդային բանակին իրենց պաշտպանելու խնդրանքով, բայց մերժվել են»,* ասում էին պատվիրակության անդամները:

«Ազգ»-ի այն հարցին, թե ինչպես է գնահատում արտասահմանյան մամուլի կողմից Հայաստանում եւ Արցախում իրադարձությունների լուսաբանումը եւ արդյոք բախումը ունի՞ կրոնական կամ էթնիկական արմատներ, Գերաշնորհ Դուէյն Էփսը պատասխանեց.

*«Միջազգային մամուլը մակերեսորեն է անդրադարձել Ղարաբաղյան իրադարձություններին: Փոխվել է հիմա այդ վերաբերմունքը թե ոչ, ինքներդ պիտի դատեք:*

*Անդրադառնալով հայ-ադրբեջանական բախումներին, պիտի նշեմ, որ մենք հենց սկզբից էլ համոզված էինք, որ դրանք կրոնական բնույթ չունեն, բայց կան էթնիկական որոշ տարրեր: Երբ մենք խոսում էինք տեղահանվածների հետ, նրանք ասում էին, թե երկար տարիներ Ղարաբաղում հայերը եւ ազերիները խաղաղ են ապրել: Երբ տեղական իշխանությունները Ղարաբաղում տապալվեցին, եւ բնականաբար, արդեն չէին կարող հսկել իրավիճակը, սկսվեցին էթնիկականաան բախումները: Սակայն, դա բնավ էլ չի նշանակում, որ մենք չպետք է վերլուծենք քաղաքական պատճառները»:*

Մինչ այդ, գերաշնորհ Դուէյն Էփսը արդեն նշել էր, թե գլխավոր խնդիրը Լեռնային Ղարաբաղում տեղական իշխանությունների բացակայությունն է:



Լուսանկարը՝ Մ. ՇԱՀՐԱՄՅԱՆԻ

Մամլո ասուլիսից հետո էլ չավարտվեց զրույցը պատվիրակության անդամների հետ: Գերաշնորհ Վիգեն վրդ. Հայկազյանը Շվեյցարիայից, անդրադառնալով «Ազգ»-ի հարցին, ասաց, որ Եւրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում եւ Շվեյցարիայում, մամուլը մեծ տեղ է տվել Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող իրադարձություններին:

Գերաշնորհ հայրը օրինակ բերեց ֆրանսիական «Լը Մոնդ»-ում տպագրված խմբագրականը՝ նվիրված մայիսյան իրադարձություններին: *«Իսկ Շվեյցարիայում,* ասաց Վիգեն վրդ. Հայկազյանը, *երկիրը, ժողովուրդը, թերթերը հատուկ ուշադրություն են դարձնում Հայաստանին»,* ավելացնելով, որ շվեյցարական թերթերը Արցախը ներկայացնում են որպես Հայաստանի պատմական տարածք:

Ի՞նչ պետք է անեն պատվիրակության անդամները, որի կազմում, բացի վերոհիշյալ անձանցից, ընդգրկված էին եպիսկոպոս Ռոլֆ Կոպպը Գերմանիայից, պրն. Հուբերտ վան Բեեկը Հոլանդիայից եւ տիկ. Թենի Փիրրի-Սիմոնյանը՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կրթական ծրագրերի տնօրենը, հայության ողբերգությունն աշխարհին ճշմարտացիորեն ներկայացնելու համար:

Ինչպես նշեց գերաշնորհ Էփսը, եկեղեցիները չեն կարող փոխել այս իրավիճակը:

Սակայն եկեղեցիները պիտի դիմեն իրենց երկրների կառավարություններին խորհրդային ղեկավարության վրա ճնշում բանեցնելու խնդրանքով, որպեսզի վերջինս ազատ արձակի հայ պատանդներին, դադարեցնի հարձակումները խաղաղ հայ գյուղերի վրա, մարդկանց անվտանգության եւ իրավունքների երաշխիքներ ստեղծի: Մենք պիտի հիշեցնենք ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին, որ նրանք պատասխանատու են պահպանել իրենց քաղաքացիների իրավունքներն ու անվտանգությունը:

Մենք ունենք բռնագաղթվածների եւ սպանվածների ցուցմունքներ եւ այլ փաստաթղթեր, եւ խորապես կվերլուծենք դրանք: Պատրաստված հաղորդագրությունները կհանձնվեն մեր ղեկավարությանը, նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կառաքվեն բոլոր եկեղեցիներին, որոնց մենք կդիմենք կոչով՝ միացնելով իրենց ուժերը, աղոթել հայ ժողովրդի համար, որն այսօր, թեեւ ծանր կացության մեջ է, բայց կանգնած է մեծ ապագայի շեմին, - ավարտեց իր խոսքը գերաշնորհ Էփսը:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆ